

ГЕНОЦИД АРМЯН. Официальные документы из германских архивов, публикуемые впервые. Составители сборника документов Вольфганг и Зигрид Густы, пер. с немецкого Давтян А. А. и Топчян А. А., под редакцией, с предисловием и примечаниями доктора исторических наук, профессора С. Степаняна, *Ереван, Изд. НАН РА "Титутюн", 2005, 480 с.*

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Առաջին անգամ հրատարակվող պաշտոնական փաստաթղթեր գերմանական արխիվներից: Փաստաթղթերի ժողովածուի կազմողներ՝ Վոլֆգանգ և Ջիգրիդ Գուստեր, գերմաներենից թարգմ. Ա. Ա. Դավթյան և Լ. Ա. Թոփչյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ասեփանյանի խմբագրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով. *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, 480 էջ:*

Վերջերս պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփանյանի նախաձեռնությամբ գերմաներենից ռուսերեն թարգմանվեց Վոլֆգանգ և Ջիգրիդ Գուստեր ամուսինների կազմած «Հայերի ցեղասպանությունը» խորագրով անանց արժեք ունեցող փաստաթղթերի ժողովածուն: Առաջաբանի հեղինակը ընթերցողին ծանոթացնում է հմուտ հետազոտող և ժամանակակից Գերմանիայի տաղանդավոր հրատարակախոս Վ. Գուստի համառոտ կենսագրությանը: Ծնվել է 1935 թ. ապրիլի 9-ին Հանովերում, ուր դպրոցն ավարտելուց հետո սովորել է Ֆրանսիական Տուլուզ քաղաքում, որտեղ ուսումնասիրել է ռոմանական գրականություն և տնտեսագիտություն: Ավարտական քննությունները հանձնել է Համբուրգում և ստացել տնտեսագետի դիպլոմ: 1965 թ. աշխատել է գերմանական հայտնի «Շպիգել» հանդեսի խմբագրությունում: Հինգ տարի եղել է հանդեսի խմբագիրը, յոթ տարի՝ «Շպիգելի» գլխավոր թղթակիցը Փարիզում: Եղել է «Շպիգել» գրահրատարակչության բաժնի վարիչ, այնուհետև դարձել է խմբագրության անկախ հեղինակ: Հենց այդ տարիներին էլ «Շպիգել» հանդեսում տպագրվում են ցեղասպանության մասին նրա հոդվածները: Դրանք Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության պարբերական մամուլում Հայոց ցեղասպանության մասին երբևէ տպագրված ամենածավալուն հոդվածներն էին: Հետաքրքրական է, որ Հայոց ցեղասպանությունը դատապարտող նրա հոդված-

ների տպագրությունից հետո գերմանա-նակ թուրքերը «Շպիգելի» շենքի դիմաց բողոքի բազմամարդ ցույց են կազմակերպում: Միաժամանակ պակաս ուշադրավ չէ, որ մեծահարուստ թուրքերից մեկը պատրաստակամություն է հայտնում գնել «Շպիգելի» Գուստի հոդվածները պարունակող ընդհանուր համարները և վառել: Գուստի հոդվածներն առաջ են բերում մեծ հետաքրքրություն Հայոց ցեղասպանությանը հետաքրքրվող գերմանական հասարակայնության մեջ: Վ. Գուստը 1990 թ. իրեն ամբողջովին նվիրում է Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությանը: 1993 թ. լույս է տեսնում նրա «Հայոց ցեղասպանությունը» գիրքը, որը նույն թվականին թարգմանվում և հրատարակվում է հայերեն: 1995 թ. Վ. Գուստը հրատարակում է «Սուլթանի կայսրությունը» գիրքը: Դրանից հետո նա գերմանական արխիվներում շարունակում է ուսումնասիրել Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ արխիվային նյութերը և հրատարակում բազում հոդվածներ: Շատ կարևոր է Գուստի այն հավաստումը, որ Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվներում կան 3000-ից ավելի փաստաթղթեր, որից Յոհանես Լեփսիուսը հրատարակել է միայն 444-ը: Ուսումնասիրելով Յ. Լեփսիուսի կազմած «Գերմանիան և Հայաստանը» ժողովածուի արխիվային նյութերը, Վ. Գուստն իր հետազոտական աշխատանքում եկել է այն եզրակացու-

յան, որ այդ գրքի արխիվային նյութերի մի մասը չի համապատասխանում գերմանական արխիվային փաստաթղթերի բնօրինակներին: ՄՎ է մեղավոր, որ «Գերմանիան և Հայաստանը» ժողովածուի բազմաթիվ նյութերի տեքստերը կրճատված կամ փոփոխված են: Այդ մասին Վ. Գուստից ավելի քան տաս տարի առաջ ահազանգել էր նաև շվեյցարացի պատմաբան Դինկելը՝ առաջարկելով ստեղծել հատուկ հանձնաժողով՝ ճշտելու համար փաստաթղթերի աղավաղումները: Վ. Գուստի ուսումնասիրությունների հենքի վրա պարզ է դառնում, որ Լեփսիուսի ժողովածուի փաստաթղթերի տեքստերի փոփոխություններն ու կրճատումները կատարվել են կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պատասխանատու աշխատողների կողմից: Այսպիսով, ըստ էության, Յոհանես և Լեփսիուսը փաստաթղթերը հրատարակել է այն տեսքով, ինչ կերպ նրան հրամայվել է: Հարկավ, Լեփսիուսն այստեղ բացարձակ մեղք չունի, չնայած անժխտելի է նաև, որ նա ևս միտում է ունեցել Հայոց ցեղասպանության դործում թեթևացնել կայզերական Գերմանիայի մեղքը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գերմանական պաշտոնական փաստաթղթերի տեքստերի փոփոխման գործում կոնկրետ առնչություն է ունեցել Գերմանիայի այն ժամանակվա կանցլեր Բեթման Հոլվեգը, որը Կ. Պոլսում իր երկրի դեսպան Վոլֆ-Մետերնիխին ավել էր հետևյալ ցուցումը. «Ոչ մի ուշադրություն չհարձնել Հայերի վրա... Մեր միակ նպատակն է՝ մինչև պատերազմի վերջը Թուրքիային պահել մեր կողմում, կարևոր է Հայերը կկոտորվեն, թե ոչ» (գրախոսվող ժողովածու, էջ 293): Հետաքրքիր է, որ հենց այս փաստաթուղթը տեղ չի գտել Յոհ. Լեփսիուսի ժողովածուում: Ավելին, Գերմանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Յիմմերմանը ցուցում էր տվել, որ «ըստ էության Գերմանիային Հայերը պետք չեն: Հայերով բնակեցված Հայաստանը վնասակար է նրա շահերին» (նույն տեղում): Վ. Գուստը հսկայական ջանքեր է թափում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում: Այսօր ինտերնետի ցանցում նա ստեղծել է հատուկ սայթ, որում տեղակայել է 1000-ից ավելի գերմա-

նական պաշտոնական արխիվային փաստաթղթեր: Սայթը ձշտապես թարմացվում և փաստաթղթերի թիվն ավելանում է:

Գրախոսվող ժողովածուի փաստաթղթերն ինչպես գերմաներեն, այնպես էլ ռուսերեն հրատարակվում են առաջին անգամ: Դրանք ցույց են տալիս, որ Գերմանիան ոչինչ չձեռնարկեց խանգարելու Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործմանը, ընդհակառակն՝ ըստ ամենայնի նպաստեց և աջակցեց: Պաշտպանելով իր դաշնակցին՝ Գերմանիան նույնիսկ փորձեց թուրքական «պատասխան միջոցառումների» համար մեղադրել Անտանտին, որը, իրը, հայերին տրամադրում էր Օսմանյան կայսրության դեմ: Պատերազմի ժամանակ ամեն մի Հաղորդագրություն Հայերի և Հայկական Հարցի մասին Գերմանիայում անպայման ենթարկվում էր ռազմական գրաքննության: Այդ իսկ պատճառով հուժանիստական Գերմանիայի ձայնը շատ թույլ էր հնչում կամ համարյա լուռ էր:

Ժողովածուն սկսվում է Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմի՝ արտաքին գործերի պետական քարտուղար Գոտլիբ Ֆոն Յագովին 1913 թ. հուլիսի 5-ին հղած նամակով, ուր նա գրում է. «...Այն հանգամանքը, որ թուրքերը չեն կարող համատեղ ապրել Հայերի հետ, պայմանավորված է Հայերի համեմատությանը թուրքերի տնտեսական անարդյունավետությամբ: Այդ կապակցությամբ բնորոշ է Ադանայի օրինակը: Մի քանի տարի առաջ այնտեղ տեղի ունեցան Հայերի կոտորածներ, և այն ամենը, ինչ պատկանում էր Հայերին, իսպառ ավերվեց և հրկիզվեց: Վայրագությունը կարելի է կանխել միայն եվրոպական ներկայացուցիչների առկայությամբ: Հյուպատոսները անբավարար են: Այնտեղ պետք է լինեն այնպիսի մարդիկ, որոնք ունակ են մարտի մեջ մտցնել ոստիկանություն կամ զինվորական ջոկատ» (էջ 57): Դյուրին է նկատել, որ փորձված դիվանագետը ցուցաբերում էր պոզիտիվ մոտեցում, սակայն երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, նա երևան բերեց միանգամայն թուրքամետ դիրքորոշում, բացահայտ հակահայկական գործելակերպ:

Առաջին անգամ, որպես գերմանական աղբյուր, հրատարակվում է այն պաշտոնական փաստաթուղթը, որը հաստատում է

Հայոց մեծ եղբուներ խորհրդանշող օրը՝ ապրիլի 24-ը: 1915 թ. ապրիլի 30-ին դեսպան Վանգենհայմը Կ. Պոլսից կանցլեր Բեթման Հոլվեգին հաղորդում է, որ «ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը և ամբողջ կիրակի և երկուշաբթի... այստեղ կատարվել են բազմաթիվ հայերի ձեռնարկություններ... ձերբակալվածները հիմնականում բժիշկներ, լրագրողներ, գրողներ, հոգևորականներ, ինչպես նաև մի քանի հայ պատգամավորներ են» (էջ 84-85): Փաստաթղթերում նշված են այն միջոցներն ու մեթոդները, որոնցով իրականացվում էին հայերի սպանությունները: Նույն Վանգենհայմը հուլիսի 13-ին կանցլերին ուղարկում է գերմանամերիկյան որբանոցում աշխատող, գերմանուհի Ֆրիդա Վոլֆ Գունեկեի նամակում նկարագրված հայերի սպանությունների աննախադեպ, սարսափելի տեսարաններ: Ահա մի երկտող այդ նամակից. «Սուլթան Համիդի ժամանակի դաժանությունների փորձով հայ բնակչությանը սկզբում զինաթափում են և այնուհետև մորթում» (էջ 136): Որպես հայ բանտարկյալների նկատմամբ Կեսարիայում կիրառած թուրքերի գազանությունների ակնատես, գերմանուհին գրել է, որ հայ կալանավորին ղնում էին տախտակի վրա (ինչպես հին հռոմեական ժամանակներում), որի երկու կողմերում և ոտքերի մոտ կանգնում էին երկուական ոստիկան: Նրանք մահակներով անընդմեջ ու հերթափոխությամբ հարվածում էին կալանավորի ներբաններին: Հին հռոմեացիների ժամանակ հարվածների թիվն ընդունված էր 40, իսկ թուրքերի մոտ հասնում էր 200, 300, 500-ի, անգամ 800 հարվածի (նույն տեղում): Թուրքական ոստիկանները տարբեր տարիքի կանանց, տղամարդկանց և երեխաների կրծքավանդակներն այրում էին շիկացած երկաթով, ծծմբաթթվով այրում էին ոտքերի մատները, դաժան միջոցներով ուռեցնում էին որովայնը և քայլում դրա վրայով, քաշում-պոկում էին ձեռքերի եղունգները կամ ասեղներ էին մտցնում եղունգների տակ: Ջրավարարվելով այդպիսի խոշտանգումներով, թուրք ոստիկանները տեղահանության ճանապարհներին հայ նորածիններին շարժում էին ջուրը կամ նետում ժայռերից: Այնուհետև նա շարունակում է, որ Միրիա-յի անապատներ տեղահանված հայերը բա-

ցարձակապես մնում էին առանց ֆրի և հացի ու մեռնում էին քաղցից ու տարառեսակ հիվանդություններից (տե՛ս էջ 139): Նա անսքող ցույց է տվել Հայոց ցեղասպանության իրագործման մեջ իր հայրենակիցների մի մասի խայտառակ գերակատարությունը. պատմում է, որ երբ որևէ մեկը դիմում էր թուրք ոստիկաններին ու չինովնիկներին, թե որն է այդ դաժանությունների պատճառը, նրանք պատասխանում էին. «այդպես են հրամայել գերմանացիները» (էջ 140): Առավել մերկացուցիչ է Ֆրիդա Վոլֆի հետևությունը՝ «Եթե մենք, գերմանացիներս, որպես Թուրքիայի բարեկամներ, այդ բոլորի դիմաց հանգիստ լռում ենք, ուրեմն մենք վայրենիներ ենք, որոնց մասին ասում են՝ «Ինձ ասա ով է քո ընկերը, և ես կասեմ քեզ՝ ով ես դու» (նույն տեղում):

Հայերի զանգվածային կոտորածների ակնատես, մայրը ֆոն Միկուլը պատմում է, որ 3000 բնակիչ ունեցող մի գյուղում թուրքական զինված խմբերը հայերի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, նրանց, կենդանի ու մեռած, նետել էին ջրհորները կամ այրել էին (էջ 210):

Երիտթուրքերը հայերի ցեղասպանությունն իրագործում էին նաև նրանց բռնի թուրքացմամբ և իսլամացմամբ: 1915 թ. դեկտեմբերի 15-ին Կ. Պոլսի գերմանական գլխավոր հյուպատոս Մորդանը հաղորդել է, որ Անատոլիայում հայերի բռնի թուրքացումն ու իսլամացումը լայն չափերով սկսվել է Տրապիզոնի նահանգից (էջ 300), իսկ Սամսունի փոխհյուպատոս Կուկկոֆը գրում էր, որ հայկական եկեղեցիները վերածվում են մզկիթների (էջ 301):

Ժողովածուի փաստաթղթերը բացահայտում են թուրքական ռազմական իշխանությունների, նրանց ղեկավարների հրամանները հայերի տեղահանությունների և բնաջնջման մասին: 1915 թ. օգոստոսի 29-ին գերմանական նախարար-ռեզիդենտ (գաղտնի հետախուզության ղեկավար) Մաքս ֆոն Օպպենհայմը ռայսականցլեր Բեթման Հոլվեգին հղած հաղորդագրության մեջ հայտնել է, որ հանդիպել է Ջեմալ փաշայի հետ և ծանոթացել նրա այն հրամաններին, որոնք վերաբերում էին տեղահանված հայերի նկատմամբ կիրառված գործողություններին: Այդ հրամաններից մեկը ստորագրվել է 1915 թ. մարտի 16-ին,

որտեղ նշվում է, որ Զեյթունի շրջակայքում անհրաժեշտ է կանխել կամ դադարեցնել թուրք բնակչության ինքնագործ խժոճությունները, որպեսզի տեղափոխվող Հայերի դեմ կիրառվող գործողություններն իրականացվեն Հիմնականում զինվորականների կողմից: Զեմալ փաշայի մեկ այլ 1915 թ. ապրիլի 2-ին ստորագրած հրամանով պարտադրվում է թուրքական տեղական իշխանություններին իրագործելու Հայ բնակչության Համընդհանուր տեղահանություն (տե՛ս էջ 196): Զեմալ փաշան 1915 թ. ապրիլի 28-ին, մայիսի 25-ին, Հունիսի 4-ին և Հունիսի 10-ին իր արձակած հրամաններով խնդիր էր դնում տեղահանությունը կազմակերպել այնպես, որպեսզի Հայերի նկատմամբ կատարված վայրագությունների լուրերը չթափանցեն արտասահմանյան երկրներ: Այս փաստաթղթերը Հաստատում են, որ Հայերի տեղահանության և ջարդարարության մասին Թալեաթ փաշայի հրամաններին զուգահեռ և նրան Հավասարազոր գործել են նաև Զեմալ փաշայի հրամանները:

Ժողովածուում տեղ են գտել արևմտահայության տեղահանության և զանգվածային կոտորածների թուրքական քաղաքականության գործողություններին Գերմանիայի մասնակցությունը Հաստատող նոր վավերագրեր: Դրանցից մեկը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մետերնիխի 1915 թ. դեկտեմբերի 7-ին կանցլերին Հղած զեկուցագիրն է և վերջինիս նրա տված պատասխանը: «Վերջին շաբաթներին, — գրել է Մետերնիխը, — Հայկական կոտորածների մասին խոսել եմ էնվեր փաշայի, Ուալի բեյի, իսկ այսօր Զեմալ փաշայի Հետ և ասել եմ, որ այդ ամենի նկատմամբ Հուզումներն ու զայրույթը տարածվել է նաև բարեկամական արտասահմանյան երկրներում և Գերմանիայի լայն շրջաններում: Զեմալ փաշայի շտաբի պետ, գնդապետ Ֆոն Կրեսը ինձ Հետ զրուցելիս ասաց, որ այս աղետը աննկարագրելի է և գերազանցում է նախորդ բոլոր պատկերացումները: Ի դեպ, երկրում տարածում է գտել այն տեսակետը, որ գերմանացիները ցանկացել են կոտորածները» (էջ 290): Վոլֆ-Մետերնիխը նշում է, որ Կ. Պոլսի օստիկանության գետի Հայտարարության Համաձայն, մայրաքաղաքից տեղահանվել է 4000 Հայ և խնդիր է դրված բնաջնջել այդ քաղաքում ապրող շուրջ 80 Հազար Հայությունը: Ի միջի այլոց նշենք, որ Հատուկ առաքելությանը դեսպան Վոլֆ-Մետերնիխը գերմանական այն եզակի դիվանագետներից էր, որ առաջարկում էր Գերմանիայի կառավարությունը կոնկրետ և զորեղ միջոցների գործադրմամբ դադարեցնել Հայերի տեղահանությունն ու կոտորածները: Գերմանիայի պաշտոնական շրջանների նման դիրքորոշումն էլ ավելի էր նպաստում Թուրքիայի կառավարիչներին, Հայաստանի մոլեռանդների վայրի կրքերի գործողություններին:

Այսպիսով, ժողովածուում պարունակած պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունից դուրսին է եզրակացնել Գերմանիան ոչ միայն ոչինչ չձեռնարկեց խանգարելու Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործմանը, այլև պաշտպանելով իր դաշնակցին, նա նույնիսկ փորձեց թուրքական «պատասխան միջոցառումներին» Համար մեղադրել Անտանտի երկրներին, որոնք, իբր, Հայերին տրամադրում էին Օսմանյան կայսրության դեմ: Գերմանիայի կառավարող շրջանները Հայոց ցեղասպանության ամբողջ ժամանակաշրջանում տրորել էին բարոյականության ու ամոթի բոլոր նորմերը: Հայերի ցեղասպանության ամենաեռուն շրջանում, 1915 թ. աշնանը, Գերմանիան չխորչեց Կ. Պոլսում Հիմնելու «Թուրք-գերմանական բարեկամության տուն», որի նախագահն է դառնում դահիճ էնվեր փաշան: Համանման «տուն» բացվեց նաև Բեռլինում: Դա «քաղաքակիրթ» գերմանական կառավարության և թուրքական ջարդարարների մարտահրավերն էր Համաշխարհային իրոք քաղաքակիրթ Հասարակայնությանը, մի մարտահրավեր, որում մարմնավորվեց պետական-քաղաքական պոռնկության վերածած վիճակի միլիտարիստական իմպերիալիզմի և երիտթուրքական դեսպոտիզմի անամոթությունը: